Պետական կառույցների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների պահպանումը՝ ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 2020 թվականի տվյալների

Վանաձոր 2020

Հեղինակ՝ Էլիանորա Մխիթարյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն տեղեկանքը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ: Սույն տեղեկանքում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակինն են, եւ հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Նախաբան

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը, մարդու իրավունքների պաշտպանությունն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու նպատակով, տեղեկատվական հարցումներ է ուղարկում պետական տարբեր կառույցներին, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին: Ստացված տեղեկություններն օգտագործվում են կազմակերպություն դիմած քաղաքացիների խախտված իրավունքների վերականգնման կամ նրանց իրավունքի իրականացմանն ուղղված իրավական խորհրդատվության նպատակով:

2020թ-ը մյուս տարիներից առանձնացավ նախ արտակարգ, ապա ռազմական դրությունների ռեժիմների սահմանմամբ: 2020թ. մարտի 16-ից Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հայտարարվեց արտակարգ դրություն՝ կորոնավիրուսի (COVID-19) համավարակով պայմանավորված: Պարետի որոշմամբ ՀՀ-ում բոլոր կառուցների՝ այդ թվում պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ կիրառվեց ժամանակավոր սահմանափակումներ, ըստ որի անձանց տեղաշարժման ազատությունը սահմանափակվեց, ինչպես նաև նշված տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմ սահմանվեց: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը շարունակեց իր գործունեությունը՝ պահպանելով COVID-19-ի համավարակի կանխարգելման պայմանները : Այդ ժամանակահատվածում պետական կառույցներին, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին հասցեագրված տեղեկատվական հարցումների զգալի մասն ուղարկվել է ոչ թե թղթային, այլ էլեկտրոնային տարբերակով: Անցումը դեպի տեղեկատվական տեխնոլոգիաների հարթակ, պետական կառույցների հետ աշխատանքը դարձրեց ավելի դյուրին, միաժամանակ ի հայտ եկան որոշակի խնդիրներ. Դրանք հիմնականում վերաբերվում էին պետական տարբեր կառույցների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական էլեկտրոնային հասցեներին: Պետք է փաստել, որ հիմնականում մարզպետարանների կայքէջերում տեղադրված պաշտոնական էլեկտրոնային հասցեները չէին գործում, իսկ ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ Պաշտպանության նախարարության, ՀՀ Ոստիկանությունն իր ստորաբաժանումներով, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ Կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ Առողջապահության նախարարության էլեկտրոնային հասցեների հետ կապված որևէ խնդիր չի առաջացել: Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն էականորեն կրճատեց տեղեկատվական հարցումների ուղարկման և դրանց պատասխանների ստացման ժամանակահատվածները, քանի որ փոստային ծառայության համար նախատեսված 7 օրերը նույպես կրճատվեցին: Արձանագրենք, որ պետական կառույցների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից արտակարգ դրության ընթացքում հարցումներին մեծամասամբ պատասխանել են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետները պահպանելով:

Կազմակերպության կողմից հերթական ուսումնասիրությամբ ներկայացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին»

ՀՀ օրենքի կատարման վիճակը 2020թ.-ին՝ համաձայն ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ստացած պատասխանների:

Ուսումնասիրման մեթոդաբանությունը

Պետական կառույցների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետների կատարման վերլուծության նպատակով կազմակերպությունը մշակել և կիրառում է հետևյալ մեթոդաբանությունը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից տեղեկատվական հարցումները հիմնականում ուղարկվել են էլեկտրոնային տարբերակով՝ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, այն է՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում:

Այդ մարմիններից ստացված պատասխանները, միաժամանակ հնարավորություն են տալիս գնահատելու նրանց կողմից տեղեկության տրամադրման՝ օրենքով սահմանված նորմերի կատարումը՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջների տեսանկյունից:
Հավաքագրված տեղեկությունը դասակարգվել է հետևյալ խմբերի՝
Ժամանակին ստացված են համարվում հարցումների այն պատասխանները, որոնք կազմակերպությունն ստացել է՝ էլեկտրոնային տարբերակի դեպքում 5 օրյա ժամկետում, փոստային ծառայության միջոցով 12 օրյա ժամկետում:
Ուշացած են համարվում օրենքով սահմանված, ինչպես նաև կազմակերպության կողմից ողջամիտ համարվող ժամկետների խախտմամբ ստացված պատասխանները:
Չպատասխանված են համարվում այն հարցումները, որոնց ընդհանրապես պատասխան չի տրվել՝ սույն տեղեկանքը հրապարակելու օրվա դրությամբ:
Տեղեկատվության բազան ստեղծվում է հետևյալ կերպ. հարցումների պատասխանները, ստացվելուն պես, մուտքագրվում են ՀՔԱՎ գրասենյակի հարցումների էլեկտրոնային բազա, որտեղ նշվում են հարցումների պատասխանների հասցեատերը, ուղարկողը, ուղարկման ամսաթիվը, հարցումների պատասխանների էլեկտրոնային տարբերակը: Աղյուսակը հասանելի է միայն ՀՔԱՎ գրասենյակի աշխատակազմին, կազմակերպության կողմից պահպանվում են տեղեկատվական անվտանգության կանոնների և անձնական տվյալների գաղտնիության պահպանման նորմերը: Տեղեկատվական բազայի տվյալների հիման վրա, տարեկան կտրվածքով, կազմվում է կատարված հարցումների վիճակագրություն:

2020թ.-ին Վանաձորի գրասենյակի կողմից ուղարկվել է *1301* գրություն, որոնցից *334(25,7%)* հարցումները հասցեագրվել են պետական կառավարման, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին. (2019թ. ուղարկված գրությունների թիվը կազմել է *1151,* որոնցից *408 (35,5%)-ը* տեղեկատվական հարցում):

Ինչպես երևում է պատկեր 1-ից, 2020 թ.-ին կազմակերպության տեղեկատվական հարցումների 10% և ավելի բաժին ունեցող բնագավառներն են ՀՀ Պաշտպանության նախարարությունը (20.06%), Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ(12.57%), Սոցիալական և առողջապահական բնագավառ(10.78%): Ըստ այդմ նշված

ոլորտներին ուղղված տեղեկատվության հարցումները կազմում են ընդհանուր հարցումների 43.41%-ը: Համեմատության համար նշենք, որ 2019 թ.-ին կազմակերպության տեղեկատվական հարցումների 10% և ավելի բաժին ունեցող բնագավառներն են ՀՀ դատախազությունը և նրա ստորաբաժանումները (14.67%), ՀՀ Պաշտպանության նախարարությունը (11.74%), Սոցիալական և առողջապահական ոլորտը(10.76%), Ոստիկանությունն իր ստորաբաժանումներով (10.27%), Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները(10.27%):

2019թ.			2020թ.		
	թիվ	%		թիվ	%
Սոցիալական և առողջապահական բնագավառ	44	10.76%	Պաշտպանության նախարարություն	67	20. 06%
Պաշտպանության նախարարություն	48	11.74%	Տարածքայյին և տեղական ինքնակառավարման մարմիններ	42	12. 57%
ՀՀ դատախազություն և նրա ստորաբաժանումներ	60	14.67%	Սոցիալական և առողջապահական բնագավառ	36	10. 78%

2019թ.



- Դատախազություն և ստորաբաժանումներ(14.67%)
- Պաշտպանության նախարարություն(11.74%)
- Սոցիալական և առողջապահական բնագավառ(10.76%)
- Ոստիկանություն և ստորաբաժանումներ(10.27%)
- Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ(10.27%)
- Արդարադատության բնագավառ(6.60%)
- ՀՀ զինկոմիսարիատներ(5.62%)
- ՀՀ քննչական կոմիտե(5.13%)
- դպրոցներ(2.20%)
- ՀՀ կրթության և գիտության նախարարություն(1.22%)
- ՀՀ արտաքին գործերի նախարարություն(1.22%)
- ՀՀ տարածքային կառավարման նախարարություն(0.73%)
- ՀՀ գյուղատնտեսության նախարարություն(0.24%)
- ՀՀ բնապահպանության նախարարություն(0.24%)
- ՀՀ ֆինանսների նախարարություն(0.24%)
- ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն(0%)
- ՀՀ սփյուռքի նախարարություն(0%)
- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն(0%)
- ՀՀ մշակույթի և սպորտի նախարարություն(0%)
- Այլ կառույցներ(18.83%)

2020թ.



- Պաշտպանության նախարարություն(20.06%)
- Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների (12.57%)
- Սոցիալական և առողջապահական բնագավառ(10.78%)
- Դատախազություն և ստորաբաժանումներ(9.28%)
- Ոստիկանություն և ստորաբաժանումների (7.19%)
- Արդարադատության բնագավառի(5.99%)
- ՀՀ կրթության ն գիտության նախարարություն(5.69%) դպրոցներ(2.69%)
- ՀՀ արտաքին գործերի նախարարություն(2.40%)
- ՀՀ քննչական կոմիտեի(1.50%)
- ՀՀ տարածքային կառավարման նախարարություն(0.60%)
- ՀՀ գյուղատնտեսության նախարարություն(0.30%)
- ՀՀ բնապահպանության նախարարություն(0.30%)
- ՀՀ ֆինանսների նախարարություն(0.30%)
- ՀՀ զինկոմիսարիաաներ(0.30%)
- ՀՀ էներգետիկ ենթակաոուցվածքների և բնական պաշարների նախարարություն(0%)
- ՀՀ սփյուռքի նախարարություն(0%)
- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրողների նախարարություն (0%)
- Այլ կաոույցներ(20.06%)

Արդարադատության ոլորտ

2020թ.-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ուղարկված 334 հարցումներից 20-ը (5.45%) ուղղված է եղել արդարադատության ոլորտին. (2019թ. այն կազմել է 6.60%): 2020թ.-ին արդարադատության ոլորտից «ժամանակին ստացված» հարցումների պաասխանները եղել են 17-ը և կազմել են այդ ոլորտին ուղարկված գրությունների 85%: Ուշացած պատասխանել են 3 հարցումների, իսկ չպատասխանված հարցումներ չեն եղել: 2019թ-ին արդարադատության ոլորտից «ժամանակին ստացված» հարցումների պատասխանները 18-ն են՝ կազմելով այդ ոլորտին ուղարկված գրությունների 66,7%-ը: Ուշացած են պատասխանել 7, և անպատասխան է մնացել 2 հարցում:

2019թ.		2020թ.	
Ժամանակին	18	Ժամանակին (85%)	17
Ուշացած	7	Ուշացած (15%)	3
Չպատասխանված	2	Չպատասխանված (0%)	0

Ոստիկանություն և նրա ստորաբաժանումները

2020 թ.-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ուղարկված 334 տեղեկատվության հարցումներից 24-ը (7,19%) ուղղված են եղել ՀՀ ոստիկանությանը և նրա ստորաբաժանումներին (2019թ. դրանք կազմել են 10,27% 408 հարցումներից 42-ը): 2020թ. ՀՀ ոստիկանության և նրա ստորաբաժանումների կողմից «ժամանակին» ստացված հարցումների պատասխանները կազմել են 73,91%, իսկ 2019թ. «ժամանակին» են ստացվել ուղարկված հարցումների 95%-ը: ՀՀ ոստիկանությունը պատասխանել է ուղարկված 23 հարցումներին, իսկ 1 հարցման պատասխան չենք ստացել:

2019թ.		2020թ.	
Ժամանակին	32	Ժամանակին (73. 91%)	17
Ուշացած	10	Ուշացած (21. 74%)	5
Չպատասխանված	0	Չպատասխանված(4. 35%)	1

Չպատասխանված գրությունը վերաբերել է՝

- Քաղաքացիական գործով հարցմանը

Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2020թ. ուղարկված 334 տեղեկատվական հարցումներից 49-և (11,29%) ուղղված են եղել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին (2019թ. -ին վերոհիշյալ կառույցներին ուղարկվել են 408 տեղեկատվական հարցումներից 42-ը (10,27%): 2020թ. տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ժամանակին ստացվել են 49 հարցումներից 27-ի պատասխանները (56,25%): Ուշացած պատասխանել են 20 գրության, և անպատասխան է մնացել 1 գրություն:

2019թ.		2020թ.	
Ժամանակին	30	Ժամանակին (56. 25%)	27
Ուշացած	12	Ուշացած (41. 67%)	20
Չպատասխանված	0	Չպատասխանված(2. 08%)	1

Չպատասխանված գրությունը վերաբերել է՝

- Ծերացման հեւանքների հաղթահարման եւ տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությանը

Սոցիալական և առողջապահական ոլորտի կառույցներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2020թ. ուղարկված 334 տեղեկատվական հարցումներից 36-ն (10.78%) ուղղված են եղել սոցիալական և առողջապահական բնագավառի կառույցներին (2019թ.-ին այն կազմել է 10,76% 408 հարցումներից 44-ը): Ուղարկված 22 հարցումներին այս ոլորտը պատասխանել է ժամանակին, 14 հարցումներին ուշացած: Նկատենք, որ 2019թ-ի համեմատ սոցիալական և առողջապահական ոլորտին ուղղված հարցումների տեսակարար կշիռը 2020թ.-ին աճել է:

2019թ.		2020թ.	
Ժամանակին	29	Ժամանակին (61. 11%)	22
Ուշացած	14	Ուշացած (38. 89%)	14
Չպատասխանված	1	Չպատասխանված(0%)	0

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2020թ.-ին ուղարկված 334 տեղեկատվության հարցումներից 67-ն (20,06%) ուղղված են եղել ՀՀ պաշտպանության նախարարությանը (2019թ. այն կազմել է 11,74% 408 տեղեկատվության հարցումներից 48-ը): 2020թ.-ին ՀՀ պաշտպանության նախարարությունից «ժամանակին» են սացվել 67 հարցումներից 35-ի (52,24%), ուշացած' 31 պատասխաններ: 2019թ.-ին 48 հարցումներից 37-ին պատասխանել են ուշացած:

2019թ.		2020թ.	
Ժամանակին	11	Ժամանակին (52. 24%)	35
Ուշացած	37	Ուշացած (46. 27%)	31
Չպատասխանված	0	Չպատասխանված(1. 49%)	1

Չպատասխանված գրությունը վերաբերել է՝

- Զինծառողի զործով հարցմանը

ՀՀ հատուկ քննչական ծառայություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2020թ-ին ուղարկված 334 հարցումներից 12-ը (3,59%) ուղարկվել է ՀՀ Քննչական ծառայություն (2019թ.-ին այն կազմել է 5,13% 408 հարցումներից 21-ը): «ժամանակին» սացվել են 11 (91,67%), ուշացած 1 հարցման պատասխան:

2019թ.		2020թ.	
Ժամանակին	15	Ժամանակին (91. 67%)	11
Ուշացած	6	Ուշացած (8. 33%)	1
Չպատասխանված	0	Չպատասխանված(0%)	0

ՀՀ Դատախազություն և ստորաբաժանումներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2020թ-ին 334 տեղեկատվական հարցումներից 31- ը (9,28%), ուղարկվել են *ՀՀ* դատախազություն և ստորաբաժանումներ (2019թ-ին այն կազմել է 14,67% 408 հարցումներից 60-ը): ժամանակին են ատացվել բոլոր 31 հարցումների պատասխանները: 2019թ. ուղարկված հարցումներից 34-ը ժամանակին են ստացվել, 25-ը ուշացած,իսկ 1 հարցման պատասխան չենք ստացել:

2019թ.		2020թ.	
Ժամանակին	34	Ժամանակին (50%)	31
Ուշացած	25	Ուշացած (0%)	0
Չպատասխանված	1	Չպատասխանված(0%)	0

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2020թ. ուղարկված 334 տեղեկատվության հարցումներից 8-ն (2.40%) ուղղված են եղել ՀՀ արտաքին գործերի նախարարությանը (2019թ.- ին այն կազմել է 1.22% 408 տեղեկատվական հարցումներից 5-ը): 2020թ. ուղարկված 8 հարցումներից 4-ին պատասխանել են ժամանակին, 3-ին ուշացած, 1-ը մնացել է անպատասխան:

2019թ.		2020թ	
Ժամանակին	0	Ժամանակին (50%)	4
Ուշացած	4	Ուշացած (37. 5%)	3
Չպատասխանված	1	Չպատասխանված(12. 5%)	1

Չպատասխանված գրությունը վերաբերել է՝

- «Ռուսական ռազմական ներկայությունը Հայաստանում և դրա ազդեցությունը մարդու իրավունքների վիճակի վրա» զեկույցին

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2020թ. ուղարկված 334 տեղեկատվության հարցումներից 19-ն (5,69%) ուղղված են եղել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը (2019թ.-ին այն կազմել է 1.22% 408 տեղեկատվական հարցումներից 5-ը): Հարցումներից 4-ին պատասխանել են ժամանակին, 3-ին ուշացած և 1 հարցման պատասխան չենք ստացել:

2019թ.		2020թ.	
Ժամանակին	2	Ժամանակին (50%)	4
Ուշացած	3	Ուշացած (37. 5%)	3
Չպատասխանված	0	Չպատասխանված(15. 5%)	1

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2020թ.-ին ուղարկված 334 տեղեկատվության հարցումներից 2-ը (0.60%-ը) ուղղված են եղել Տարածքային կառավարման նախարարությանը (2019թ-ին այն կազմել է 0,73% 408 տեղեկատվական հարցումներից 3-ը), 2 հարցումների պատասխաններն էլ ստացվել են ժամանակին :

2019թ.		2020թ.	
Ժամանակին	1	Ժամանակին (100%)	2
Ուշացած	1	Ուշացած (0%)	0
Չպատասխանված	1	Չպատասխանված(0%)	0

Դպրոցներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2020թ.-ին ուղարկված 334 տեղեկատվության հարցումներից 5-ը (1,5%-ը) ուղղված են եղել ՀՀ դպրոցներին (2019թ.-ին այն կազմել է 2,20% 408 տեղեկատվական հարցումներից 9-ը), ժամանակին ստացվել է բոլոր 5 հարցմումների պատասխանները:

2019թ.		2020թ.	
Ժամանակին	6	Ժամանակին (100%)	5
Ուշացած	3	Ուշացած (0%)	0
Չպատասխանված	0	Չպատասխանված(0%)	0

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2020 թվականին ուղարկված 334 տեղեկատվության հարցումներից 60-ն ուղարկվել են այլ կառույցների, մասնավորապես՝

- **Ազգային Անվտանգության Ծառայություն** ուղարկվել է 2 հարցում, որոնցից 1-ի պատասխանը ստացվել է ժամանակին,իսկ մյուսը չենք ստացել
- **ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանն ստացվել է ժամանակին
- **ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ** ուղարկվել է 2 հարցում, որոնցից 1-ի պատասխանը ստացվել է ժամանակին,իսկ մյուսը ուշացած
- **ՀՀ ԱԺ Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ուշացած
- **ՀՀԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ուշացած
- **ՀՀվարչապետին** ուղարկվել է է 5 հարցում, որոնցից 2-ի պատասխանը ստացվել է ուշացած, 2- ինը ժամանակին, 1-ը մնացել անպատասխան
- **ՀՀԱՆ քրեակատարողական ծառայությանն** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- **ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային** բաժին ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- **ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն** ուղարկվել է 4 հարցում, որոնցից 2-ի պատասխանը ստացվել է ժամանակին, 1-ինը ուշացված, 1-ը մնացել անպատասխան
- **ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն** ուղարկվել է 1 հարցում, որի

պատասխանն ստացվել է ժամանակին

- **ՀՀ Կադաստրի կոմիտե** ուղարկվել է 7 հարցում,որոնցից 5-ի պատասխանը ստացվել է ժամանակին, 2-ը մնացել են անպատասխան
- **ՀՀԶՈՒ ռազմաբժշկական վարչություն** ուղարկվել է 2 հարցում, որոնցից 1-ի պատասխանը ստացվել է ուշացած, 1-ինը ժամանակին
- **ՀՀ ֆինանսների նախարարություն** ուղարկվել է 3 հարցում, որոնցից 1-ի պատասխանը ստացվել է ուշացած, 2-ինը ժամանակին
- **ՀՀ անձնագրային և վիզաների վարչություն** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանն ստացվել է ուշացած
- **ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն** ուղարկվել է 3 հարցում, որոնցից 1-ի պատասխանը ստացվել է ուշացած, 2-ինը ժամանակին
- **ՀՀազգային արխիվ** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանն ստացվել է ժամանակին
- **Մատենադարան: Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի անվան գիտահետազոտական ինստիտուտ** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանն ստացվել է ժամանակին
- **Բարձրագույն դատական խորհուրդ** ուղարկվել է 2 հարցում, որոնցից 1-ի պատասխանը ստացվել է ուշացած, 1-ինը ժամանակին
- **ՀՀ դատական դեպարտամենտ** ուղարկվել է 2 հարցում, որոնցից 1-ի պատասխանը ստացվել է ուշացած, 1-ինը ժամանակին
- **ՀՀ ՊՆ կենտրոնական արխիվ** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանն ստացվել է ժամանակին
- **Հարավկովկասյան երկաթուղի փակ բաժնետիրական ընկերություն** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանն ստացվել է ժամանակին
- **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե** ուղարկվել է 2 հարցում, որոնց պատասխանն ստացվել է ժամանակին
- **ՀՀԿԵ քաղաքաշինության պետական կոմիտե** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանն ստացվել է ժամանակին
- **ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն** ուղարկվել է 3 հարցում, որոնց պատասխանները ստացվել են ժամանակին
- **ՀՀ պետական եկամուտների կոմիտե** ուղարկվել է 3 հարցում, որոնց պատասխանները ստացվել են ուշացած
- **Վանաձորի պետական համալսարան** ուղարկվել է 2 հարցում, որոնց պատասխանները ստացվել են ժամանակին
- **ՀՀկենտրոնական բանկ** ուղարկվել է 2 հարցում, որոնց պատասխանները ստացվել են ժամանակին
- **ՀՀ Սանիթեք ՍՊԸ** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը չենք ստացել
- **ՀՀԱՆ կից մինջգերատեսչական ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողով** ուղարկվել է 2 հարցում, որոնց պատասխանները ստացվել են ժամանակին
- **ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն** ուղարկվել է 1 հարցում,որին պատասխանել են ժամանակին
- **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն** ուղարկվել է 1 հարցում, որին պատասխանել են ժամանակին
- **Վանաձոր համայնքի «Մերաստիա» համատիրություն** ուղարկվել է 2 հարցում, որոնց պատասխանել են ժամանակին

Ամփոփելով 2020թ. պետական կառույցների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեղեկատվական հարցումներին տրված պատասխաններն ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետների, արձանագրում ենք, որ սահմանված ժամկետները պահպանել են հետևյալ պետական մարմինները.

- **Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ**
- **Ազգային անվտանգության ծառայություն**
- **ՀՀ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն**
- **ՀՀմարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ**
- **ՀՀ ԱԺ Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով**
- **ՀՀ ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով**
- **ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն**
- **ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժին**
- **ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն**
- **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչություն**
- **ՀՀ ֆինանսների նախարարություն**
- **ՀՀ անձնագրային և վիզաների վարչություն**
- **ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն**
- **ՀՀազգային արխիվ**
- **Մատենադարան: Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի անվան գիտահետազոտական ինստիտուտ**
- **Բարձրագույն դատական խորհուրդ**
- **ՀՀ դատական դեպարտամենտ**
- **ՀՀ ՊՆ կենտրոնական արխիվ**
- **Հարավկովկասյան երկաթուղի փակ բաժնետիրական ընկերություն**
- **ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերությաե նախարարություն**
- **ՀՀ պետական եկամուտների կոմիտե**
- **Վանաձորի պետական համալսարան**
- **ՀՀ կենտյտնական բանկ**
- **ՀՀ ԱՆ կլից մինջգերատեսչական ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողով**
- **ՀՀ Շրջակա միջավայրի նախարայաություն**
- **ՀՀ էկոնոմիկայի նախարայաություն**
- **Վանաձոր համայնքի «Մեբաստիա» համատիրություն**
- **ՀՀ Արդարադատության նախարարություն**
- **ՀՀ ԱՆ քրեակատայաղական վարչություն**
- **ՀՀ արդարադատության ակադեմիա**
- **ՀՀգլխավոր դատախազություն**

2020թ.-ին առավել մեծ թվով ժամանակին պատասխաններ տրամադրած կառույցներն են՝

- ՀՀ ոստիկանություն և ստորաբաժանումներ
- ՀՀ Քննչական կոմիտե
- ՀՀ արդարադատության ակադեմիա
- ՀՀ գլխավոր դատախազություն
- ՀՀ Պաշտպանության նախարարություն
- ՀՀ Արդարադատության նախարարություն
- ՀՀ Դատախազություն ու ստորաբաժանումներ

Համեմատության կարգով նշենք նաև 2019թ.-ին ժամանակին պատասխան տրամադրած կառույցների ցանկը՝

- ՀՀ ոստիկանություն և ստորաբաժանումներ
- Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ
- Սոցիալական և առողջապահական ոլորտի կառույցներ
- ՀՀ Զինվորական կոմիսարիատներ
- ՀՀ Քննչական կոմիտե
- ՀՀ դպրոցներ
- Ազգային Անվտանգության Ծառայություն

2020թ.-ին առավել մեծ թվով ուշացած և պատասխան չտրամադրած կառույցներն են՝

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը
- Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ
- ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարությունը
- ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը

Համեմատության կարգով նշենք 2019թ.-ին ուշացած և պատասխան չտրամադրած կառույցների ցանկը՝

- ՀՀ պաշտպանության նախարարություն
- ՀՀ արդարադատության բնագավառի կառույցներ
- ՀՀ դատախազությունը և նրա ստորաբաժանումներ

Ինչպես տեսնում ենք, ՀՀ Պաշտպանության նախարարությունը, ՀՀ գլխավոր դատախազությունը, ՀՀ ոստիկանություն ստորաբաժանումները թե՛ 2019թ, թե 2020-ին տեղեկատվական հարցումներին ամենաշատ թվով ժամանակին պատասխաններ տրամադրած կառույցներն են: Համեմատության համար նշենք, որ 2020թ-ին նվազել է չստացված և ուշացած գրությունների տեսակարար կշիռը, ժամանակին ստացված գրություններինն աճել է:

Ամփոփելով՝ 2020թ. պետական կառույցներին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղարկված 334 տեղեկատվական հարցումներից «ժամանակին» են ստացվել 227 հարցման պատասխան (67,96%), ուշացած 98 (29,34%), իսկ 9 հարցման պատասխան չի ստացվել (2,69%):

Համեմատության համար նշենք, որ 2019թ. պետական կառույցներին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղարկված 408 տեղեկատվական հարցումներից «ժամանակին» են ստացվել 241 հարցման պատասխան (59,07%), ուշացած՝ 155 (37.99%), իսկ 12 հարցման պատասխան չի ստացվել (2,94%):